

Թվերը գրելու հնամենի եղանակը

Թվերի գրառումը հայերենի այբուբենի տառերով.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
1	2	3	4	5	6	7	8	9
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
10	20	30	40	50	60	70	80	90
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
100	200	300	400	500	600	700	800	900
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ի	Փ	Ք
1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000

Օգտվելով այս աղյուսակից լուծեք խաչքառը

Խաչքառ

Հարցերը լուծեք բանավոր և ներկայացրեք հայերենի այբուբենի տառերով.

Հորիզոնական

- 1) Գտեք բաժանելին, եթե բաժանարարը 33 է, թերի քանորդը՝ 6, մնացորդը՝ 2:
- 2) Գտիր բաժանարարը, եթե բաժանելին 323 է, թերի քանորդը՝ 8, մնացորդը՝ 3:
- 3) Գտեք ուղղանկյունանիստի ծավալը, եթե նրա չափումներն են՝ 2 սմ, 5 սմ, 2 սմ: Գրել միայն թվային մասը:
- 4) Ի՞նչ ամենամեծ մնացորդ կարող է ստացվել բնական թիվը 10-ի բաժանելիս:
- 5) Ո՞րն է ամենափոքր բնական թիվը:
- 6) Գտեք 25000-ի $\frac{1}{5}$ մասը:

Ուղղաձիգ

- 1) Գտեք 2500-ի $\frac{4}{5}$ մասը:
- 2) Գտեք ամենափոքր քառանիշ թվի և ամենամեծ եռանիշ թվի տարբերության հնգապատիկը:
- 3) Ո՞րն է ամենափոքր գույգ բնական թիվը:
- 4) Ա
- 5) Գտեք ամենափոքր հնգանիշ թվի և ամենափոքր բնական թվի հնգապատիկի քանորդը:
- 6) Ի՞նչ թիվ է մտապահել Սոնան, եթե նրա մտապահած թիվը փոքրացնենք 4 անգամ, արդյունքից հանենք ամենամեծ եռանիշ թիվը, կստանանք ամենափոքր բնական թիվը:
- 7) Ո՞րն է ամենափոքր կենտ բնական թիվը:
- 8) Որքանո՞վ կմեծանա եռանիշ թիվը, եթե նրան ձախից կցագրենք 6 թվանշանը:
- 9) Երկու արկղերում կա 30 գնդակ: Քանի՞ գնդակ կա առաջին արկղում, եթե առաջին արկղից երկրորդի մեջ դնենք 10 գնդակ, իսկ երկրորդից առաջինի մեջ՝ 5 գնդակ, ապա երկու արկղերում հավասար քանակով գնդակներ կլինեն:



